

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից առաջարկվող համալիր մոտեցումը

ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Կարեն Գրիգորյանը ներկայացրեց «ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված առաջարկվող համալիր մոտեցումը» թեմայով գիտական հաղորդումը հունիսի 15-ին կայացած գիտական քննարկման ժամանակ:

Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանը, ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի հասարակական հիմունքներով



խորհրդական Ռաֆայել Գևորգյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ Կարեն Գասպարյանը, ՀՀ

գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Աղբալյանը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ, գիտաշխատողներ, ԵՊՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱԱՀ-ի և այլ բուհ-երի

գիտնականներ:

Քննարկվեցին պղնձի արտադրության կարևորության, ծծմբական թթվի, մաքուր պղնձի արտադրության շահավետության հարցերը ՀՀ-ում, ինչպես նաև՝ ծծմբական թթվից ՀՀ-ում սպառվող նյութերի արտադրության հնարավորությունը: Մասնակիցներն անդրադարձան նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման զարգացման հեռանկարներին: Հատուկ ընդգծվեց ճարտարագետ-տեխնոլոգների պատրաստման անհրաժեշտությունը քիմիայի և մետալուրգիայի բնագավառներում:

Քննարկումը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն